**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**26.12.2016. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/3/1 ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին**

ք. Երևան 06 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ԱՁ Աշոտ Գրիգորյանն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 26.12.2016թ. կնքված ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/3/1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 4.2 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով Պայմանագրի 4.1.1 և 4.2 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **Պատվիրատու** | **Կատարող** |
| --- | --- |
| ՀՀ ԿԱԱԳԿՊԿ | Ա/Ձ Աշոտ Գրիգորյան |
| ք.Երևան, Արշակունյաց7 | ք. Երևան, Աէրացիա 2/11 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ,Բյուզանդ մ/ճ |
| Հ/Հ 900013220026 | Հ/Հ 1510031008810100 |
| ՀՎՀՀ 02534328 | ՀՎՀՀ 86020109 |
| Աշխատակազմի ղեկավար՝ ____ Վ. Հասրաթյան (ստորագրություն) | տնօրեն Ա. Գրիգորյան ____ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված*
*26.12.2016թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/3/1*
*ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման պայմանագրի*
*06 փետրվարի 2017թ. կնքված թիվ 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների**

հազար ՀՀ դրամ

| հ/հ | Ծառայության անվանումը | Ֆինանսավորման գումարը 2017թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ | 210.0 | 420.0 | 630.0 | 840.0 | 1050.0 | 1260.0 | 1470.0 | 1680.0 | 1890.0 | 2100.0 | 2300.0 | 2300.0 |

***գումարը ներկայացված է աճողական կարգով:**

**Պատվիրատու**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
ք.Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար ________ Վ.Հասրաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կատարող**

Ա/Ձ Աշոտ Գրիգորյան
ք. Երևան, Աէրացիա 2/11
«Արարատբանկ» ԲԲԸ, Բյուզանդ մ/6
Հ/Հ 1510031008810100
ՀՎՀՀ 86020109

Տնօրեն ________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.